



ԵՐԿՈՒԵԱՔԹԻ, 8 ՓԵՏՐՈՒԱՐ, 2016

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՐՏՈՍ 139

ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՏԱՐԵԱԼ ԳԻՏՈՒԹԻՒՆՆ ՈՒ ՀՈԳԱԾՈՒԹԻՒՆԸ

Տէր, փորձեր ես եւ կը գանչնասզիս.
Դուն գիտես իմ նիստուկացս,
եւ հեռուէն իսկ կը կարդաս մտածումներս:
Կը հետեւիս աշխատանքիս ու հանգիստիս,
եւ ծանօթ ես բոլոր գործերուս:
Դեռ ես բերանս չբացած՝
արդէն գիտես ամէն բան, **Տէր**:
Դուն էիր որ ստեղծեցիր մարմնիս բոլոր անդամները,
եւ զիս կազմաւորեցիր մօրս որովայնին մէջ:
Քեզի համար գաղտնիք մը չէր իմ կազմութիւնս,
երբ տակաւին ես նոր սկիզբ կ'առնէի,
մարդոցմէ ծածուկ՝ ինամբով կը կազմաւորուէի մօրս որովայնին մէջ:
Ինձի համար՝ խորհուրդներդ հասկնալը ինչ դժուար է, ո՛վ Աստուած:
Փորձէ զիս, ո՛վ Աստուած, զննէ սիրտս,
եւ տես, եթէ ես կորուստի տանող գամբու մէջ եմ,
դուն ինքդ զիս յաւիտեանական գամբաներուդ առաջնորդէ:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխաՀիս խաղաղութիւն:
Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:
Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ԱՂՈԹՔ

*Պահապան ամենայնի Զրիստոս,
աջ քո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*

ՕՐՈՒՄՆ ՆԻԻԹԸ



ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒՄԸ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ (ԳԼԽ 6:1-20)



ՉԵՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԹՈՂ ԱՍՏՈՒԾՈՅ ՓԱՌՔԻՆ ԾԱՌԱՅԵՆ (6:12-20)

Պօղոս Առաքեալ խօսել է երբ համայնքին ներս փրոդ կացութեան մասին, թէ ինչպէս կարելի է եղբայր եղբօր դէմ դատ ունենայ եւ դիմէ հեթանոս դատարաններուն, կ'անցէ անգամ մը եւս խօսելու բարոյական հարցի մասին, ինչ որ նախապէս անդրադարձած էր:

Կը սկսի այսպէս. «Ամէն ինչ արքօնուած է ինծի, բայց ամէն ինչ օգտակար չէ: Ամէն ինչ արքօնուած է ինծի, բայց պէք չէ ռեւէ բանի գերին դառնամ» (12 հմր): Արքայայարութիւն մը որ կարելի է առնել երկու ձեով.

1. Կորնթացիներուն կողմէ եղած արքայայարութիւն մը, որ Պօղոս Առաքեալ կ'օգտագործէ իր ըսելիքը փոխանցելու համար.

2. Առաքեալին իսկ կողմէ եղած արքայայարութիւն մը, որ Կորնթացիները այս անգամ կը շահագործեն իրենց ընելիքը արդարացնելու համար:

Խօսքը կը վերաբերի ազատութեան մասին: Սակայն Առաքեալը կը յիշեցնէ, թէ ազատութիւնը ընտրութիւն կը պահանջէ: Ճիշդ է ամէն ինչ ընելու ազատ կրնանք ըլլալ, բայց իսկական ազատութիւնը այն է երբ ինչ որ կ'ընենք մեր բարիքը ծառայէ, այսինքն՝ օգտակարութիւնը ունենայ, եւ վնաս չտայ, անձին կամ շրջապարհին, այն արեւն ազատութիւն չըլլար, այլ՝ սպրկութիւն: Մանաւանդ՝ մարմնական ցանկութիւններն ու սոլութիւնները:

«Կերակուրը սքամոքսին համար եղած է եւ սքամոքսը՝ կերակուրին, սակայն Աստուած թէ՛ մէկը եւ թէ՛ միւսը պիտի խափանէ: Բայց նոյնը չէ մարմինին պարագան: Մարմինը պոռնկութեան համար չէ, այլ՝ Տիրոջ համար, եւ Տէրը՝ մարմինին: Որովհետեւ Աստուած ինչպէս որ Տէր Յիսուսը յարուցանեց՝ այնպէս ալ մեզ պիտի յարուցանէ իր գորութեամբը» (13-14 հմր): Այս հարցին շուրջ շար աւելի ընդարձակ պիտի անդրադառնայ (10 գլխ) կուրքերու գոհուածներէն ուրելու: Այսպէս պարզապէս կ'օգտագործէ օրինակը աւելի կարեւոր նիւթի մը մասին խօսելու, ան ալ մարմինի պարագան, որ դարձեալ "ազատութիւն" ունենալու սխալ հասկացողութենէն բխած: Արքայայարութիւն մը, որով Կորնթացիները կը փորձէին անով արդարացնել իրենց ապրելակերպն ու կենցաղը: Այնպէս կը փրամաքանէին, որ եթէ ուրելն ու չուրելը կապ չունի մարդուս հոգեւոր կեանքին հետ, նոյնպէս ալ ուրեմն մարմնական խառնակ կենցաղը արգելք մը չէ մարդուս հոգեւոր կեանքին: Պօղոս Առաքեալ ճշդում մը կ'ընէ, եթէ նոյնիսկ ուրելս եւ չուրելս բան մը չեն փոխեր, թէպէտ կը փոխեն (շարակերութեան պարագան), մանաւանդ երբ երկուքն ալ՝ ուրելիքն ու սքամոքսը պիտի խափանուին, բայց նոյնը չէ մարմինի պարագան: Որովհետեւ մարդուս մարմինը.

1. Աստուծոյ կողմէ փրուած յարուկ նպատակի մը համար է:
2. Քրիստոսի անդամ է:
3. Սուրբ Հոգիին փաճարն է:

Եթէ ուրելիքը ժամանակաւոր է ու անցողակի, բայց մարմինն պարագան նոյնը չէ, եւ միայն այս կեանքին համար չէ: Այս մարմինը սահմանուած է Տիրոջ հետ ըլլալու եւ ոչ թէ փոշիանալու, ինչպէս շարեր կը կարծեն: Գալով ներկայ կեանքին, Աստուած այս մարմինը փրուած է ամուսնութեան համար եւ ոչ թէ պոռնկութեան: Որովհետեւ ինչպէս Աստուած Տէր Յիսուս Գրիստոսը յարուցանեց մեր մարմիններն ալ պիտի յարուցանէ:

Երկրորդ, «Չէ՞ք գիտեր թէ ձեր մարմինները Գրիստոսի անդամներն են: Գրիստոսի անդամները առնենք պոռնիկի անդամ դարձնենք» (15 հմր): Պօղոս Առաքեալ յարակօրէն կը ներկայացնէ, որ Եկեղեցին Գրիստոսի մարմինն է, որուն անդամներն ենք բոլորս: Առաքեալը այս բացատրութեամբ ցոյց կու տայ մարմինին փեղը, դերը, ու անոր կարեւորութիւնը: Ուստի ինչպէս կ'ըլլայ Գրիստոսի անդամները դարձնենք պոռնիկի անդամի:

Որովհետեւ «Չէ՞ որ գիտէք թէ պոռնիկին միացողը անոր հետ մէկ մարմին կը կազմէ, որովհետեւ գրուած է. "Երկուքը մէկ մարմին պիտի ըլլան": Նոյնպէս ալ, ով որ Տիրոջ միանայ՝ անոր հետ մէկ հոգի կ'ըլլայ» (16-17 հմր): Առաքեալը մէջբերելով Ծննդոց գիրքի հարուածը, որ կը ներկայացնէ այր եւ կնոջ կապը, եւ այս մէկութիւնը. մէկ սիրտ, մէկ միտք, մէկ հոգի եւ մէկ կամք: Նոյնպէս ալ Աստուծոյ հետ, Գրիստոսի հետ միութիւնը հոգեւոր սիրոյ միութիւն է:

Որովհետև, պոռնիկի մը հետ միախառնուելով, որ դուրս է Քրիստոսի միութենէն, մարմինը կը դադրի իր պաշտօնը կապարելէ, խզելով իր կապը Քրիստոսի միութենէն:

«Հերեաբար, պոռնկութենէ հեռու փախէք: Բոլոր միւս մեղքերը որ մարդ կը գործէ, իր մարմինին հետ կապ չունի. բայց պոռնկութիւն ընողը իր մարմինին դէմ կը մեղանջէ: Չէ՞ք գիտեր որ ձեր մարմինները փաճարն են Սուրբ Հոգիին որ Աստուծմէ առիք եւ ձեր մէջ կը բնակի» (18-19 հմր): Ուրեմն մի հակաճառէք եւ փորձէք արդարացում գտնել, այլ ընդհակառակը շուրջով հեռու փախէք պոռնկութենէ: Յաջորդ նախադասութիւնը քիչ մը փարօրինակ կը թուի, բայց այդ չէ Առաքեալին ըսածը, թէ միւս բոլոր մեղքերը որ մարդը կը գործէ իր մարմինին հետ կապ չունին: Բոլոր մեղքերու պարագային մարդուն մարմնին հետ կապ ունին, անոնք ըլլան արտաքին ազդակէ կամ ներքին: Առաքեալին ըսածը կարելի է իբրեւ համեմատական առնել, եւ առաւել եւս միտք բանին մարմինին պարագան, որ նկատի ունի որպէս Քրիստոսի անդամը եւ զայն վերածելու պոռնիկի անդամի: Որովհետև այդ մարմինները Սուրբ Հոգիին փաճարն են:

Մինչեւ հիմա կարծէք Առաքեալը կը խօսէր որպէս իրենց մարմինը, բայց կը յիշեցնէ, **«որ դուք չէք ձեր անձերուն փերը, այլ Աստուած՝ որ փրկագինով ձեզ գնեց: Հերեաբար այնպէս ապրեցէ՛ք որ Աստուած փառաւորուի ձեր մարմիններով»** (19-20 հմր): Ուրեմն չէկ կրնար ձեր ուզած ձեռով ապրիլ կամ օգտագործել այս մարմինը, որովհետև Տէրը փրկագին վճառեց անոր համար, մեզ ազատելու մեղքի սարկութենէն: Աստուած փառաւորուի մեր մարմիններով կը նշանակէ այնպէս մը գործածել այս մարմինը Աստուծոյ փեսական ծառայութեան մէջ անով ցոլացնելու Աստուծոյ իմաստութիւնը, սէրը, գեղեցկութիւնն ու կապարելութիւնը: